ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

ԳՄՀԸ-ի «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ԷԿՈսերվ) ծրագիրը հայտարարում է «Էներգաարդյունավետ համայնքներ» խորագրով իրազեկության բարձրացման արշավի վերաբերյալ գաղափարների հայտերի ընդունում:

Ընդհանուր տեղեկություններ

«Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն՝ Հարավային Կովկասում կայուն համայնքային զարգացման համար» (ԷԿՈսերվ) ծրագիրը մաս է կազմում ավելի լայն գերմանական օժանդակության՝ «Հարավային Կովկասում բնապահպանական քաղաքականության, պահպանության և բնական պաշարների կայուն օգտագործման» առաջնահերթ ոլորտում: Հայաստանում ԷԿՈսերվ ծրագրի նպատակն է բարելավել արոտավայրերի կայուն կառավարման նախապայմանները՝՝ հատուկ ուշադրություն հատկացնելով գյուղական համայնքների բնակչության էներգետիկ անվտանգությանը: Հայաստանում ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հանդիսանում է ծրագրի քաղաքական գործընկեր, իսկ Շրջակա միջավայրի և Էկոնոմիկայի նախարարությունները՝ իրականացնող գործընկերներ:

ԷԿՈսերվ ծրագրի էներգետիկ բաղադրիչն առնչվում է վառելափայտի կամ գոմաղբի՝ որպես ջեռուցման էներգիայի աղբյուրի ավելի արդյունավետ օգտագործման կամ փոխարինման շուկայական մոտեցումների խթանմանը, այն անդրադառնում է կանանց համար որոշակի օգուտներին (օրինակ՝ տան օդի որակը, սենյակային ջերմաստիճանը, վառելափայտի գնման օրինական լինելը): Գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններում էներգաարդյունավետության (ԷԱ) բարձրացումը կարող է զգալիորեն նվազեցնել ջեռուցման համար վառելիքի (վառելափայտ, գոմաղբ և այլն) օգտագործումը՝ նվազեցնելով անտառների դեգրադացիան ու բնակչության շրջանում էներգիայի պակասը: Վերականգնվող կենսազանգվածից ստացվող այլընտրանքային կոշտ կենսավառելիքը նույնպես կարող է փոխարինել վառելափայտին/գոմաղբին՝ որպես

ջեռուցման համար օգտագործվող վառելիք: ԷԿՈսերվ ծրագրի շրջանակում մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել Հայաստանում գյուղական բնակավայրերի էներգիայի պահանջարկի, առաջարկի և արդյունավետության վերաբերյալ՝ կենտրոնանալով գյուղական բնակավայրերի և վառելափայտի և գոմաղբի օգտագործման հետ կապված ասպեկտների վրա: Հայաստանի Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի ընտրված համայնքային խմբերում իրականացված պիլոտային միջամտությունը խթանեց էներգաարդյունավետ վառարանների տեղական արտադրությունն ու գործող արտադրամասերում արտադրվող (ծղոտի) բրիկետների օգտագործումը: Ծրագրի մանրամասները համառոտ ներկայացված են տեղեկատվական թերթիկում: ԷԿՈսերվ ծրագիրը նախատեսում է անդրադառնալ ԷԱ և վերականգնվող էներգիայի (ՎԷ) լուծումներին ոչ միայն գյուղական համայնքների տնային տնտեսություններում, այլև հանրային շենքերում այնպիսի միջոցներով, ինչպիսիք են արևային էներգիան, ջերմամեկուսացումը և այլն:

Շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկության բարձրացումը ԷԿՈՍերվ ծրագրի հիմնական ուղղություններից մեկն է, որի նպատակն է բարձրացնել բնական ռեսուրսների կառավարման, էկոհամակարգային ծառայությունների, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի վերաբերյալ գիտելիքը՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխությունը, ինչպես նաև իրականացնել միջոցառումներ, որոնք հատուկ նպատակ են հետապնդում երիտասարդների և կանանց շրջանում բարձրացնել շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկությունը:

2020-2021 թթ. ԷԱ-ի և ՎԷ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացման արշավ է կազմակերպվել Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, որի նպատակն էր հանրային զրույցների, ինֆոգրաֆիկ նյութերի և Վիքիպեդիայում հոդվածների մշակման, «Էներգապոլիա» կոչվող սեղանի խաղի ստեղծման և համայնքային մրցույթի միջոցով բարձրացնել մարդկանց իրազեկվածությունը էներգիայի առնչվող թեմաների վերաբերյալ:

Մեկ այլ՝ «Ֆինանսական և էկոլոգիական գրագիտություն՝ ուղղված Հայաստանի գյուղական բնակավայրերում էներգաարդյունավետության խթանմանը» (FELCA) նախաձեռնությունը իրականացվել է 2021-2022 թթ. և ներառել ուսուցումներ տնային տնտեսությունների ֆինանսական կառավարման և խնայողություններ վերաբերյալ, որոնք կապված են էներգաարդյունավետության և բնապահպանական խնդիրների հետ,

գործողությանը ներգրավվել է ավելի քան 3600 գյուղաբնակ անձ 10 մարզերից , նկարահանվել է գործողության հիմնական արդյունքների մասին պատմող կարճ ֆիլմ:

Իրազեկության բարձրացման արշավի նպատակները, թիրախային տարածքները ու խմբերը

Արշավի **նպատակն** է իրականացնել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի վերաբերյալ հատուկ գենդերային ուղղվածությամբ իրազեկության բարձրացման արշավ/միջոցառումներ, որոնց ընդհանուր նպատակն է խթանել վարքագծի փոփոխություններ ու ստեղծել նախապայմաններ, որպեսզի համայնքները դառնան էներգաարդյունավետ, ուղղված դեպի կայուն էներգիան և ընդհանուր առմամբ նվազեցնեն շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վրա ազդեցությունը՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության միտումները: Ջեռուցման նպատակով վառելափայտի/գոմաղբի օգտագործման նվազեցման խնդիրը պետք է լինի ուշադրության կենտրոնում:

Արշավը պետք է իրականացվի **գյուղական համայնքներում**՝ հետևյալ բոլոր կամ առնվազն երեք **թիրախային մարզերում**՝ Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Շիրակ և Սյունիք: Խրախուսվում է ընդգրկել հնարավորինս շատ մարզեր, սակայն քարոզարշավի իրականացման համար ընտրված աշխարհագրությունը պետք է հաշվի առնի իրագործելիությունն ու արդյունավետությունը: Գյուղական համայնքները կարող են գտնվել անտառին մոտ կամ հեռու: Համայնքների ու համապատասխան բնակավայրերի վերջնական ընտրությունը պետք է համակարգվի ԷԿՈՍ ծրագրի հետ:

Հիմնական թիրախային խմբերը ներառում են երիտասարդներին (15-33 տարեկան) և **կանանց** (ուսուցիչներ, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների ներկայացուցիչներ, , այլ ակտիվ դերակատարներ համայնքներում): Նախատեսվում է ներգրավել մոտ **1000 երիտասարդ** և մոտ **100 կին՝ կենտրոնանալով որոշում կայացողների վրա** (ավագանու անդամներ/համայնքների և մարզպետարանների ներկայացուցիչներ/այլ ակտիվ համայնքային ներկայացուցիչներ): Համապատասխան հաստատությունների ներգրավման համար առաջնահերթությունը տրվում է կանանց և երիտասարդների համար հատուկ նշանակություն ունեցող հանրային ենթակառուցվածքներին, ինչպիսիք են մանկապարտեզները, առողջապահական հաստատությունները, մշակութային և

սպորտային կենտրոնները, բուսաբանական այգիները, տեղական թանգարանները, դպրոցները և այլն (առնվազն մինչև 10 հաստատություն յուրաքանչյուր մարզում):

Քարոզարշավի պոտենցիալ գործողությունները/միջոցառումները

Ակնկալվում է, որ հայտատուն կառաջարկի նորարարական, արդյունավետ, գործնական և մասնակցային միջոցառումներ և կհասցեագրի թիրախային խմբին՝ քարոզարշավից հետո հաշվի առնելով դրա գործնական կամ շոշափելի արդյունքներն ու կայունությունը: Իրականացման գործողությունների օրինակները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով.

- **Առաջարկել և իրականացնել ԷԱ/ՎԷ թեմաներին առնչվող բնապահպանական իրազեկման բարձրացման միջոցառումներ համայնքներում** (դա կարող է կառուցվել, համահունչ լինել կամ լրացնել ԷԿՈսերվ ծրագրի պոտենցիալ գործնական իրականացման գործողություններին, ինչպիսիք են վերականգնվող էներգիայի սարքերի խթանումը, օրինակ՝ արևային ջրատաքացուցիչները և փոքր հանրային շենքերի տանիքներին տեղադրող ֆոտովոլտային կայանների վահանակները, ընտրված տնային տնտեսությունների և հանրային շինությունների ջերմամեկուսացման միջոցառումները, էներգաարդյունավետ վառարանների խթանումը և այլն): Այսպիսով, իրազեկության բարձրացման միջոցառումների առաջնահերթությունը տրվում է կանանց և երիտասարդների համար հատուկ նշանակություն ունեցող հանրային ենթակառուցվածքներին, ինչպիսիք են մանկապարտեզները, առողջապահական հաստատությունները, մշակութային և սպորտային կենտրոնները, բուսաբանական այգիները, տեղական թանգարանները, դպրոցները և այլն (առնվազն մինչև 10 հաստատություն յուրաքանչյուր մարզում): Հայտատուի կողմից ակնկալվում են իրազեկության բարձրացման հատուկ միջոցների ու միջոցառումների (գործնական և շոշափելի, ինտերակտիվ և ներգրավող) առաջարկներ:
- **Հանդիպումներ (կոնֆերանսներ, աշխատաժողովներ, սեմինարներ և այլն) տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների կին ներկայացուցիչների համար՝** թեմաները, միջոցառումները և գործողությունները պետք է առաջարկվեն հայտատուի կողմից:
- **Հաքաթոն (յուրաքանչյուր մարզում մեկական)՝** հնարավոր թեմաները ներառում են՝ «Ինչպե՞ս դարձնել ձեր դպրոցը էներգաարդյունավետ և նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը» կամ «Ինչպե՞ս բարձրացնել ԷԱ/ՎԷ վերաբերյալ իրազեկությունը համայնքում»: Հաքաթոնը կարող է ներգրավել

թիմեր՝ ԷԱ/ՎԷ թեմաների վերաբերյալ առաջարկություններ ստանալու, տեղական խնդիրները վերհանելու և լուծումներ առաջարկելու գործընթացներում:

- **Մաքուր էներգիայի վերաբերյալ 4 ինտերակտիվ անիմացիաների ստեղծում և սոցիալական մեդիայի ու գործընկերային ալիքների միջոցով դրանց տարածում: Թեմաները ներառում են.**
  - Ինչպես դարձնել ձեր տնային տնտեսությունն ու համայնքը/բնակավայրը էներգաարդյունավետ
  - Տների ջեռուցումը կոշտ կենսավառելիքով և ընտանիքների առողջությունը
  - Ջերմամեկուսացում.օգուտներ ընտանիքների և շրջակա միջավայրի համար, ինչպես ջերմամեկուսացնել ձեր տունը ամենատարածված ջերմամեկուսիչ նյութերով (պատեր, առաստաղ, նկուղային հարկ և այլն)
  - Բնական ռեսուրսներ և էներգաարդյունավետության/կայուն էներգիայի լուծումներ
- **Այլ միջոցառումների և գործողությունների առաջարկներ**

Դիմումի իրավասություն

Իրականացնող կողմի հետ նախատեսվում է կնքել ԳՄՀԸ-ի տեղական դրամաշնորհի պայմանագիր: Առաջարկող միջամտությունը պետք է համահունչ լինի հայտատուի առաքելությանն ու նպաստի կազմակերպության ներուժի կառուցմանն ու զարգացմանը: Իրավասու կազմակերպություններ են շահույթ չհետապնդող կազմակերպությունները /ՀԿ-ներ, հիմնադրամները, ասոցիացիաներ և այլն/:

Տևողություն

Սեպտեմբեր 2022թ.- Օգոստոս 2023թ.

Բյուջե

Բյուջեի շեմը կազմում է 12 480 000 ՀՀ դրամ: Բյուջեն կարող է փոփոխվել Եվրո-Դրամ արտարժույթի տատանումների հետևանքով:

Դիմումի փաթեթ

Դիմումի փաթեթը պետք է ներառի.

- Ծրագրի նկարագրությունը կամ հայեցակարգը ներառյալ գործողությունների իրականացման ժամանակցույցը և հիմնական արդյունքները (Word ձևաչափով);
- Բյուջեն;
- Կազմակերպության համառոտ բնութագիրը:

Լրացված դիմումի փաթեթները պետք է էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվեն biodiversity-armenia@giz.de հասցեին:

Դիմումները պետք է ներկայացվեն և ստացվեն մինչև **օգոստոսի 15-ը, ժ. 23:59** (Երևանի ժամանակով):